



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5  
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

**Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ  
05.04.2018Թ.**

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 12 անդամները:

Բացակայում են՝ Մելիք Գասպարյանը, Նորիկ Վարդանյանը և Արթուր Փանոսյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

**Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Շ. Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բայրաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Պ.Գաբրելյանը և գյուղերի վարչական ղեկավարները:**

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագիրը և տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
2. Չարենցավան համայնքի 2018 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդում:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ինքնակամ կառուցված շինություններն օտարելու և վարձակալությամբ տրամադրելու մասին:
6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքներն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
7. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝**

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

**Կողմ -12**

**դեմ - 0**

**ձեռնպահ -0**

**Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:**

**Լսեցին.**

1. Չարենցավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագիրը և տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

**/Չեկ. Ա. Ծերունյանը/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թ. հունվարի 12-ի թիվ 01/16.2/80-18 հանձնարարականը՝ **առաջարկում եմ** հաստատել Չարենցավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագիրը և 2018թ. տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն N N 1,2 հավելվածների: Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 25-ի «Չարենցավան համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 24-Ն որոշումը:

**Համայնքի ղեկավար . Շահգալոյան**

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ - 12**

**դեմ - 0**

**ձեռնպահ -**

**Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:**

**Լսեցին.**

2. Չարենցավան համայնքի 2018 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդում:

**/Չեկ. Պ. Գաբրելյան/**

**Առաջարկում եմ** ընդունել ի գիտություն Չարենցավան համայնքի 2018 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդումը

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-12**

**դեմ - 0**

**ձեռնպահ -0**

**Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:**



**Լսեցին.**

3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին

**/Չեկ. Պ. Գաբրելյան/**

Հաշվի առնելով Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Իսահակ քահանա Մարգարյանի 2018 թվականի մարտի 26 թիվ 807/16, Կարենիս գյուղի բնակիչ Վլադիկ Ասատրյանի 2018 թվականի մարտի 27-ի թիվ 835/16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ **առաջարկում եմ**. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլնպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ.դրամ հատկացնել **Իսահակ Մարգարյանին**: Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլնպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ.դրամ հատկացնել **Վլադիկ Ասատրյանին**:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ -12**

**դեմ - 0**

**ձեռնպահ -0**

**Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:**

**Լսեցին.**

4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին::

**/Չեկ. Բ.Բալբաբյան/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ **առաջարկում եմ** .թույլատրել 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու համայնքի սեփականության հանդիսացող **քաղաք Չարենցավան Օղակային փողոց թիվ 11 «Ա.Խաչատրյանի անվան ՄԵԴ» ՀՈԱԿ-ի շինության** կիսանկուղային հարկից 211.6 քմ մակերեսով տարածք:

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-12**

**դեմ - 0**

**ձեռնպահ -0**

**Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:**